Հայոց լեզու մարզային փուլ - Պատասխաններ

11-րդ դասարան

1.**Դեկան**-դրամի միավոր
Սկզբում եղել է **դարեհական** ձևով և կապվել է Աքեմենյան պետության ներկայացուցիչներից մեկի՝ Դարեհ Առաջինի անվան հետ: Հնչյունափոխվելով դարձել է **դահեկան**, հետո՝ **դեկան**: Փոխառված է իրանյան լեզուներից:

Դեկան-համալսարանի կամ ինստիտուտի որևէ բաժանմունքի ղեկավար Լատիներեն բառ է, որ նշանակել է **տասնապետ** (հունարեն դեկա-տասը բառից):

2.Նավասարդ-իրանյան բառ է և նշանակում է ***նոր տարի :*** Հայոց նավասարդը օգոստոսին էր. համապատասխանում էր մեր այժմյան օգոստոսի 11-ից սեպտեմբերի 9-ի միջև ընկած ժամանակահատվածին:

3.**վարգ** - ձիու համաչափ վազք
խույր -գլխի պսակաձև փաթթոց կամ գլխանոց
ամպհովանի - (եկեղեցական) մեծ ու քառակուսի հովանոց կաթողիկոսի և բարձրաստիճան հոգևորականների համար, (պատմական) գահի, անկողնու, դիակառքի (և այլն) վրա ամրացված անշարժ հովանոց
մասունք -(եկեղեցական) եկեղեցական սրբերի կմախքի մասեր, որոնք, ըստ կրոնական պատկերացումների, հրաշագործ զորություն ունեն, (փոխաբերական) որևէ նշանավոր, թանկագին մարդու աճյուն կամ աճյունի մասեր,(փոխաբերական) որևէ կարգի հին հուշարձանի մնացորդ, (փոխաբերական) առհասարակ շատ թանկագին, սրբազան բան
անվեհեր - առյուծասիրտ, կտրիճ, սրտոտ

4.**սև ոսկի**-նավթ
սրճագույն ոսկի-տորֆ
սպիտակ ոսկի- բամբակ
կապույտ ոսկի-ջուր, գազ
փափուկ ոսկի-մորթի
կանաչ ոսկի-թեյ

6.**պատրիարք** -քրիստոնեական եկեղեցու հոգևոր բարձրագույն աստիճանավորի տիտղոսը, հայոց եկեղեցում՝
ա) Ամենայն հայոց կաթողիկոսը (ծայրագույն պատրիարք)
բ) Երուսաղեմի Սուրբ Հակոբա վանքի ավագ եպիսկոպոսը
գ) Կոստանդնուպոլսի հայոց եկեղեցու ավագ եպիսկոպոսը